ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Աննա Մեջլումյան Ա/Ձ-ն ՀՀ ՏՄԻՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/05 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
29	Ռուսական, Հայկական	1-ին տեսակի ցորենի ալյուր	Ռուսական, Հայկական	Բարձր տեսակի ալյուր, /փաթեթավորումը՝ առավելագույնը 1 և 5կգ՝ /ըստ պատվերի/: Ցորենի ալյուրին բնորոշ, առանց կողմնակի համի և հոտի, ալյուրի գույնը սպիտակ կամ սպիտակ՝ կրեմագույն երանգով, գործարանային փաթեթավորմամբ՝ համապատասխան մակնշումով: Մակնշումն՝ ընթեռնելի: Առանց թթվության և դառնության, առանց փտահոտի ու բորբոսի: Խոնավության զանգվածային մասը՝ ոչ ավելի 15 %-ից, մետաղամագնիսական խառնուրդները՝ ոչ ավելի 3,0%-ից, մոխրի զանգվածային մասը՝ չոր նյութի ոչ ավել 0.55%, հում սոսնձանյութի քանակությունը՝ առնվազն 28,0%: ՀՍՏ 280-2007 կամ տվյալ ստանդարտի ցուցանիշներին համարժեք: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ ոչ պակաս 60 %: Ապրանքին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝

				անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշմամբ հաստատված «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» (ՄՄ ՏԿ 029/2012), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 874 որոշմամբ ընդունված «Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011) տեխնիկական կանոնակարգերի: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ՝ ոչ շուտ քան 8:30-ից մինչև ոչ ուշ քան 16:30-ը: Մթերքի մատակարարման դեպքում տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 1 օր: Մատակարարման կոնկրետ օրը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ.

					փոստով կամ հեռախոսակապով: Մատակարարումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին՝ համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով, *ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: Տեղեկացվում է, որ տվյալ սննդամթերքի կասկածելի որակի կամ տեսքի դեպքում այն կներկայացվի փորձաքննության՝ ապրանքի որակի համապատասխանությունը բնութագրում ներկայացված պահանջները հաստատելու նպատակով: Տեղեկացվում է նաև, որ սնունդը մատակարարելիս անհրաժեշտ է, որ համապատասխան անձը ներկայանա անձը հաստատող փաստաթղթով և մատակարարող կազմակերպության կողմից տրված լիազորագրով:Համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 31-ի «Իջևան համայնքի ենթակայության մանկապարտեզների կողմից սննդամթերքի ձեռքբերման գործընթացը

				ուսումնասիրելու նպատակով մշտական հանձնաժողով ստեղծելու մասին» N 20 կարգադրության համաձայն հանձնաժողովը պարբերաբար հետևելու է մատակարարների հետ կնքված պայմանագրով ստանձնած պարտականությունների պատշաճ կատարմանը: Հանձնաժողովը անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում կազմվում է արձանագրություն, որը պարտավորվում է ստորագրել սնունդը մատակարարող կազմակերպության լիազորած ներկայացուցիչը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Աննա Մեջլումյան Ա/Ձ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՏՄԻՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-25/05 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
29				